ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

28 մարտի շաբաթ 2026
տպագրության ԺԵ տարի

36
(3245)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

95 ՇԻՆԱՐԱՐ՝ ԽԱԲԵՈՒԹՅԱՆ ԶՈՀ

Մի քանի տասնյակ քաղաքացիներ, որոնք աշխատում են շինարարական ընկերություններում, ArmLur.am-ին հայտնում են, որ խաբեության զոհ են դարձել:

Շինարարներից մեկը՝ Լյովա Հովհաննիսյանը, ArmLur.am-ի հետ զրույցում հայտնել է, որ այդ շինարարական կազմակերպությունները գլխավորում է գործարար Նարեկ Նալբանդյանը: Լյովա Հովհաննիսյանը գլխավոր ինժեներն է, որը շինարարների հետ հավասար աշխատանք է կատարել, նա տեղեկացնում է, որ ամիսներ շարունակ ավելի քան 90 շինարարներ աշխատել են երեք տարբեր ընկերություններում, սակայն նրանց հրաժարվել են վճարել:

«Մեր աշխատած փողերը չենք կարողանում ստանալ: Ամիսներ շարունակ աշխատել ենք՝ սեպտեմբերի կեսերից մինչեւ դեկտեմբերի 30-ը: Աշխատել ենք Սեւանում Նարեկ Նալբանդյանին պատկանող հյուրանոցի շինարարությունում, աշխատել ենք «Բայանդուր Շիրակ» թռչնաֆաբրիկայում, Ապարանի Լուսագյուղի դպրոցի շինարարությունում: 15 մլն դրամի Սեւանում ենք աշխատել, 20 մլն դրամի՝ թռչնաֆաբրիկայում, 12 մլն դրամի մեկ այլ օբյեկտում ու եւս 5 մլն դրամի Լուսագյուղի դպրոցում: «Վենեցիա» հյուրանոցի տնօրենին փողը փոխանցել են, բայց մենք փող չենք տեսել՝ ո՛չ ինժեներականը, ո՛չ բանվորությունը: Նարեկ Նալբանդյանի գլխավորած շինարարական կազմակերպություններն են»,- ասաց մեր զրուցակիցը:

⇨ էջ 3

Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդմանը զուգահեռ հրապարակվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի 2025 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան զեկույցը: Այն ընդգրկում է Կանխարգելման ազգային մեխանիզմի մշտադիտարկման արդյունքում վերահանված խնդիրները, ինչպես նաեւ դրանց լուծման առաջարկները: Զեկույցն ամփոփում է՝ քրեակատարողական հիմնարկներում, հոգեբուժական կազմակերպություններում, Ոստիկանության ձերբակալվածներին պահելու վայրերում եւ դատարաններում ազատությունից զրկված անձանց ժամանակավոր պահման խցերում արձանագրված խնդիրները: 2025 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանը կանխարգելման ազգային մեխանիզմի գործառույթի շրջանակներում իրականացրել է 59 մշտադիտարկման այց (20-ը պարբերական, իսկ 39-ը՝ ըստ անհրաժեշտության)՝ նպաստելով առկա խնդիրների բացահայտմանը եւ դրանց լուծմանն ուղղված առաջարկությունների ներկայացմանը:

⇨ էջ 4

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արման Ղազարյանը հարցին, թե վերջին շրջանում նկատվում է, որ Նիկոլ Փաշինյանը ակտիվ այցելություններ է իրականացնում մարզեր, այդ թվում՝ Գավառ, արդյո՞ք հետեւում է այս գործընթացին եւ ինչպե՞ս կգնահատի այն, պատասխանել է. «Իրականում սա պարզապես ներկուսակցական քարոզարշավ չէ: Վարչական ռեսուրսների օգտագործմամբ քարոզչական գործընթացն սկսվել է շատ ավելի վաղ: Տարիներով կուտակված ծրագրերը, շինարարությունները եւ անավարտ նախագծերը ներկայացվում են հենց հիմա՝ ընտրություններին ընդառաջ: Չնայած պաշտոնապես չեն հնչում ուղիղ նախընտրական խոստումներ, սակայն ակնհայտ է, որ այցելությունները նպատակ ունեն քաղաքական ազդեցություն ապահովել: Սա կառավարության սովորական աշխատանք չէ, այլ վաղաժամ մեկնարկած քարոզարշավ»:

⇨ էջ 2

Իրանի ԱԳՆ խոսնակ Էսմայիլ Բաղաեին կոշտ քննադատել է Կանադայի կողմից Իրանի դեմ նոր պատժամիջոցների սահմանումը՝ զգուշացնելով, որ նման քայլերը չեն ապահովելու որեւէ երկրի անվտանգությունը: Բաղաեին արձագանքել է Կանադայի արտգործնախարար Անիտա Անանդի հայտարարությանը, ըստ որի՝ Օտտավան մտադիր է նոր սահմանափակումներ կիրառել Իրանի նկատմամբ: Իրանի ԱԳՆ խոսնակը X-ի իր միկրոբլոգում գրել է, որ «ագրեսորներին եւ ճնշողներին հաճոյանալու նպատակով զոհին ճնշելը չի փրկի դրանց հետեւանքներից»՝ ընդգծելով, որ նման քաղաքականությունը միայն խրախուսում է նման ուժերին: Նա հավելել է, որ «ֆաշիստական մոտեցում ունեցողներին զիջելը չի կանգնեցնում նրանց, այլ ընդհակառակը, մեծացնում է նրանց ախորժակը»: Այսպիսով, պաշտոնական Թեհրանը բացասական է գնահատում Կանադայի նոր քայլերը՝ դրանք դիտարկելով որպես քաղաքական ճնշման շարունակություն Իրանի նկատմամբ:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

ՎԱՂԱԺԱՄ ՄԵԿՆԱՐԿԱԾ ՔԱՐՈԶԱՐՇԱՎ

Armlur.am-ը զրուցել է Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արման Ղազարյանի հետ:

-Վերջին շրջանում նկատվում է, որ Նիկոլ Փաշինյանը ակտիվ այցելություններ է իրականացնում մարզեր, այդ թվում՝ Գավառ: Արդյո՞ք հետեւում եք այս գործընթացին եւ ինչպե՞ս կգնահատեք այն:

-Իրականում սա պարզապես ներկուսակցական քարոզարշավ չէ: Վարչական ռեսուրսների օգտագործմամբ քարոզչական գործընթացն սկսվել է շատ ավելի վաղ: Տարիներով կուտակված ծրագրերը, շինարարությունները եւ անավարտ նախագծերը ներկայացվում են հենց հիմա՝ ընտրություններին ընդառաջ: Չնայած պաշտոնապես չեն հնչում ուղիղ նախընտրական խոստումներ, սակայն ակնհայտ է, որ այցելությունները նպատակ ունեն քաղաքական ազդեցություն ապահովել: Սա կառավարության սովորական աշխատանք չէ, այլ վաղաժամ մեկնարկած քարոզարշավ:

-Ինչպե՞ս կգնահատեք Գեղարքունիքի մարզ այցելությունը:

-Այցելության ընթացքում ակնհայտ էր, որ մասնակցությունն ամբողջությամբ բնական չէր: Տպավորություն կա, որ մարդկանց ներգրավումը տեղի է ունեցել վարչական լծակների կիրառմամբ:

Միեւնույն ժամանակ, ներկայացվող պատկերն իրականությանը լիովին չի համապատասխանում: Օրինակ՝ Վարդենիսի տարածաշրջանում առկա են բազմաթիվ խնդիրներ՝ պետական հիմնարկների բացակայություն, տրանսպորտի խնդիրներ, անվտանգային մարտահրավերներ, սահմանամերձ համայնքների անտեսված կարգավիճակ: Այս խնդիրներին պատշաճ արձագանք չի տրվում:

-Վարչական ռեսուրսների կիրառում նկատո՞ւմ եք:

-Այո՛, նկատվում է: Կան դեպքեր, երբ համայնքային աշխատակիցները կամ այլ կառույցների ներկայացուցիչները ներգրավվում են նման հանդիպումներին՝ ոչ ամբողջությամբ կամավոր սկզբունքով: Սա ցույց է տալիս, որ գործընթացը կազմակերպվում է վարչական ռեսուրսների միջոցով:

-Փաշինյանը նշել էր, որ եթե ժողովուրդը իրեն չընտրի, ապա սեպտեմբերին պատերազմ կլինի: Ինչպե՞ս կմեկնաբանեք այս հայտարարությունը:

-Այս հայտարարությունը կարելի է դիտարկել որպես քաղաքական ճնշման կամ վախի մթնոլորտ ձեւավորելու փորձ: Ստացվում է, որ ընտրությունը ներկայացվում է որպես պատերազմ-խաղաղություն ընտրություն: Եթե նման վտանգի մասին տեղեկություն կա, ապա առաջանում է հարց՝ ինչ քայլեր են ձեռնարկվում պատերազմը կանխելու համար: Հակառակ դեպքում սա ընկալվում է որպես ընտրողին ուղղված ազդակ՝ «ինձ ընտրեք, հակառակ դեպքում վտանգ կլինի»:

-Ինչպե՞ս կգնահատեք Երեւանի մետրոյում տեղի ունեցած միջադեպը, երբ Փաշինյանը վիճաբանեց արցախցի կնոջ հետ՝ երեխայի ներկայությամբ:

-Այս միջադեպը լայն արձագանք ստացավ հասարակության մեջ: Քաղաքական եւ բարոյական տեսանկյունից նման վարքագիծը չի համապատասխանում պետական պաշտոն զբաղեցնող անձի կերպարին: Հատկապես անչափահաս երեխայի ներկայությամբ նման իրավիճակը ավելի է սրում գնահատականը: Հանրային գործիչը պետք է պահպանի զսպվածություն եւ հարգալից վերաբերմունք՝ անկախ իրավիճակից:

Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳ

ԸՆՏՐՎԵԼ Է ՆԱԽԱԳԱՀ

«Նոր դարաշրջան» կուսակցության նախագահ Հարություն Հարությունյանի ֆեյսբուքյան գրառումը.

«Հարգելի ընկերներ, գործընկերներ տեղեկացնում եմ, որ, մենք՝ հիմնականում իրավաբան եւ փաստաբան գործընկերներով եւ ավելի լայն շրջանակով, բավականին երկար ժամանակահատված է, ինչ քննարկում ենք պետության ապագայի մասով մեր պատկերացումները եւ անելիքները: Ի վերջո, գուցեեւ ոչ այնքան հեշտ, բայց որոշում կայացրեցինք հրաժարվել մեր հանգիստ կյանքից եւ մտնել մեծ պատասխանատվության տակ:

24.03.2026 թվականին՝ «Նոր դարաշրջան» կուսակցության արտահերթ համագումարում ընտրվել եմ նույն կուսակցության նախագահ:

Ի թիվս այլնի, կուսակցության եւ մեր բոլորի նպատակն է ազատ, ինքնիշխան եւ իրավական պետության ձեւավորումը, ինչը պետք է իրականացվի պետության ողնաշար հանդիսացող անկախ եւ անաչառ դատական իշխանության (համակարգի) ձեւավորմամբ եւ ամրապնդմամբ՝ բացառելով իրավական անվտանգության եւ իրավական որոշակիության դեմ ուղղված ցանկացած միջամտություն: Այս նպատակին հասնելը շատ բարդ է, բայց իրագործելի: Բարդ է հատկապես այն պարագայում, երբ մենք մեր ամենօրյա մասնագիտական գործունեության ընթացքում տեսնում ենք, թե ինչ իրավական քաոսի մեջ է հայտնվել ողջ իրավապահ համակարգը, ինչն անխուսափելիորեն ազդել եւ ազդում է նաեւ դատական համակարգի վրա: Կուսակցության անդամներ են իրավաբաններ, փաստաբաններ, քաղաքագետներ, մաթեմատիկոսներ եւ ամենատարբեր ոլորտների մասնագետներ, ովքեր մտահոգված են եւ պատրաստակամ իրենց ունեցած հնարավորություններով, գիտելիքներով եւ փորձով մասնակցություն ունենալ քաղաքական գործընթացներին: Այդ նպատակին հասնելու համար մեր կուսակցությունը քաղաքական խորհրդակցություններ եւ հանդիպումներ է անցկացնում արտախորհրդարանական ուժերի հետ եւ առաջիկայում հանդես կգա հստակ դիրքորոշմամբ եւ հայտարարությամբ:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՋՈՐՔ

Պենտագոնը քննարկում է Մերձավոր Արեւելք մոտ 10,000 զինվոր ուղարկելու հարցը՝ ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի՝ Իրանի հետ բանակցություններում առաջընթացի մասին հայտարարությունների ֆոնին, հաղորդում է The Wall Street Journal-ը (WSJ)՝ հղում անելով իր աղբյուրներին: Նրանց տեղեկությունների համաձայն՝ տարածաշրջանում ամերիկյան զորքերի ուժեղացումը կարող է ներառել հետեւակային եւ զրահատեխնիկա՝ բացի տարածաշրջան արդեն ուղարկված 5000 ծովային հետեւակայիններից եւ մի քանի հազար դեսանտայիններից:

ԽՈՒԶԱՐԿԵԼ ԵՆ ՏՆԵՐԸ

ArmLur.am-ի աղբյուրների փոխանցմամբ՝ երեկ խուզարկություն է իրականացվել Ալեն Սիմոնյանի հետ երեկ միջադեպ ունեցած Արսեն Վարդանյանի եւ Միկա Մարգարյանի տներում:

Իր տան խուզարկության մասին ֆբյան իր էջով հայտնել էր նաեւ Միկա Մարգարյանը:

Հիշեցնենք, որ երեկ՝ մարտի 26-ին, Ալեն Սիմոնյանը վիճել է քաղաքացի Միկա Մարգարյանի հետ, որն, ի աջակցություն, անհետ կորած զինծառայողների ծնողների հետ ակցիա էր իրականացնում ԱԺ-ի դիմաց, Ալեն Սիմոնյանը փոխադարձաբար վիրավորել եւ հայհոյել էր Միկա Մարգարյանին եւ Արսեն Վարդանյանին:

Ն. Ա.

ԿՈՉ Է ԱՐԵԼ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՍԿՍԵԼ

ՄԱԿ-ի մարդու իրավունքների գերագույն հանձնակատար Վոլկեր Թյուրքը կոչ է արել հետաքննություն սկսել Իրանի Մինաբ քաղաքում գտնվող աղջիկների դպրոցի վրա հարձակման գործով:

«ԱՄՆ բարձրաստիճան պաշտոնյաները հայտարարել են, որ հարվածի հետաքննություն է ընթանում: Ես կոչ եմ անում այս գործընթացն ավարտել հնարավորինս շուտ եւ դրա արդյունքները հրապարակել»,-ասել է նա՝ելույթ ունենալով ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդում կայացած քննարկման ժամանակ:

Թյուրքը հավելել է, որ հետաքննություն անցկացնելու պատասխանատվությունը կրում են հարձակումն իրականացրած անձինք:

ՔՆՆԱՐԿՎԵԼ ԵՆ

ԱՄՆ-ում ՀՀ դեսպան Նարեկ Մկրտչյանը հանդիպում է ունեցել Դաշնային հաղորդակցությունների հանձնաժողովի (FCC) նախագահ Բրենդան Քարի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են հաղորդակցության եւ անվտանգության ոլորտի մի շարք առաջնահերթություններ՝ հիբրիդային սպառնալիքների, ապատեղեկատվության դեմ պայքարի եւ այլնի համատեքստում:

Դեսպան Մկրտչյանը կարեւորել է FCC-ի ունեցած փորձն ու ընդգծել համագործակցության անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով այս ոլորտում Հայաստանի ունեցած ներուժը, ենթակառուցվածքների եւ տեխնոլոգիական զարգացման գործընթացում սահմանված առաջնահերթությունները:

Դիտարկվել են հաղորդակցության ոլորտում լավագույն փորձի փոխանակման, ոլորտային փոխայցերի իրականացման եւ համագործակցության ինստիտուցիոնալացման հնարավորությունները:

ԻՐԱՆՆ ԱՐՁԱԳԱՆՔԵԼ Է ԿՈՉԵՐԻՆ

Իրանի արտգործնախարար Աբբաս Արաղչին քննադատել է Թեհրանին ուղղված միակողմանի «զսպվածության» կոչերը՝ ընդգծելով, որ իրականում պատերազմը տարածաշրջանում սկսել են ԱՄՆ-ն եւ Իսրայելը:

Իրանական կողմի փոխանցմամբ՝ Արաղչին հեռախոսազրույց է ունեցել ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Անտոնիո Գուտերեշի հետ, որի ընթացքում քննարկվել են տարածաշրջանային վերջին զարգացումները, ինչպես նաեւ ԱՄՆ-Իսրայել ռազմական գործողությունների անվտանգային եւ հումանիտար հետեւանքները:

Արտգործնախարարը Գուտերեշին ներկայացրել է իրավիճակի վերջին զարգացումները՝ նշելով, որ ԱՄՆ-ն եւ Իսրայելը հարվածներ են հասցրել ոչ ռազմական օբյեկտների՝ դպրոցների, հիվանդանոցների, մշակութային եւ պատմական հուշարձանների, բնակելի տարածքների ուղղությամբ: Նա ընդգծել է, որ Իրանը շարունակելու է իր «օրինական ինքնապաշտպանությունը»՝ պաշտպանելով ազգային անվտանգությունն ու տարածքային ամբողջականությունը:

Արաղչին նաեւ հիշեցրել է ՄԱԿ-ի պատասխանատվության մասին՝ արձագանքելու միջազգային իրավունքի եւ ՄԱԿ-ի կանոնադրության խախտումներին՝ կոչ անելով հստակ եւ վճռական դիրքորոշում ցուցաբերել ագրեսորների նկատմամբ:

Միաժամանակ նա նշել է, որ Հորմուզի նեղուցում ստեղծված լարվածությունը ԱՄՆ-ի եւ Իսրայելի գործողությունների հետեւանք է՝ հավելելով, որ Իրանը, որպես առափնյա պետություն, իրավունք ունի վերահսկելու այդ ջրային ուղիներով անցնող նավերի շարժը եւ արդեն ձեռնարկել է համապատասխան միջոցներ:

Իր հերթին Գուտերեշը վերահաստատել է ՄԱԿ-ի սկզբունքային դիրքորոշումը՝ երկրների ինքնիշխանության եւ տարածքային ամբողջականության հարգման անհրաժեշտության վերաբերյալ՝ մտահոգություն հայտնելով տարածաշրջանում շարունակվող պատերազմի եւ զոհերի աճի կապակցությամբ:

Նա նաեւ հայտնել է, որ Մերձավոր Արեւելքի հարցերով իր ներկայացուցիչ է նշանակվել Ժան Առնոն, որի նպատակը Իրանի հետ ուղիղ կապ հաստատելն ու ճգնաժամի կարգավորման շուրջ խորհրդակցություններ վարելն է:

Իրանական կողմը նշում է, որ ԱՄՆ-ն եւ Իսրայելը լայնածավալ ռազմական գործողություններ են սկսել Իրանի դեմ՝ օդային հարվածներ հասցնելով ինչպես ռազմական, այնպես էլ քաղաքացիական ենթակառուցվածքներին, ինչը հանգեցրել է զոհերի եւ մեծ ավերածությունների: Պատասխան գործողությունների շրջանակում Իրանի զինված ուժերը հրթիռների եւ անօդաչու սարքերի միջոցով հարվածներ են հասցրել ամերիկյան եւ իսրայելական դիրքերին տարածաշրջանում:

Ա. Վ.

ԱՀԱՋԱՆԳ

95 ՇԻՆԱՐԱՐ՝ ԽԱԲԵՈՒԹՅԱՆ ԶՈՀ

Մի քանի տասնյակ քաղաքացիներ, որոնք աշխատում են շինարարական ընկերություններում, ArmLur.am-ին հայտնում են, որ խաբեության զոհ են դարձել:

Նարեկ Նալբանդյանը հրաժարվում է 95 շինարարի 55 մլն աշխատած գումարը վճարել

Շինարարներից մեկը՝ Լյովա Հովհաննիսյանը, ArmLur.am-ի հետ զրույցում հայտնել է, որ այդ շինարարական կազմակերպությունները գլխավորում է գործարար Նարեկ Նալբանդյանը: Լյովա Հովհաննիսյանը գլխավոր ինժեներն է, որը շինարարների հետ հավասար աշխատանք է կատարել, նա տեղեկացնում է, որ ամիսներ շարունակ ավելի քան 90 շինարարներ աշխատել են երեք տարբեր ընկերություններում, սակայն նրանց հրաժարվել են վճարել:

«Մեր աշխատած փողերը չենք կարողանում ստանալ: Ամիսներ շարունակ աշխատել ենք՝ սեպտեմբերի կեսերից մինչեւ դեկտեմբերի 30-ը: Աշխատել ենք Սեւանում Նարեկ Նալբանդյանին պատկանող հյուրանոցի շինարարությունում, աշխատել ենք «Բայանդուր Շիրակ» թռչնաֆաբրիկայում, Ապարանի Լուսագյուղի դպրոցի շինարարությունում: 15 մլն դրամի Սեւանում ենք աշխատել, 20 մլն դրամի՝ թռչնաֆաբրիկայում, 12 մլն դրամի մեկ այլ օբյեկտում ու եւս 5 մլն դրամի Լուսագյուղի դպրոցում: «Վենեցիա» հյուրանոցի տնօրենին փողը փոխանցել են, բայց մենք փող չենք տեսել՝ ո՛չ ինժեներականը, ո՛չ բանվորությունը: Նարեկ Նալբանդյանի գլխավորած շինարարական կազմակերպություններն են»,- ասաց մեր զրուցակիցը:

Նա նաեւ տեղեկացրեց, որ «Վենեցիա»-ի տնօրենի մոտ այլ հարազատ մարդու են ուղարկել, որ բարձրացնի իրենց խնդիրը, շինարարի խոսքով, տնօրենին ստիպել են՝ «признать» է եկել: Ասել է՝ «ես 230 մլն եմ տվել: Գնացեք՝ իրենից ուզեք փողը»:

Մենք նաեւ հետաքրքրվեցինք, թե արդյոք շինարարները տվյալ ընկերությունների հետ ունեն կնքած աշխատանքային պայմանագիր: Ի պատասխան մեր հարցի՝ Լյովա Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ նման առաջարկ չի եղել, իրենք էլ չեն պահանջել:

«Ես գիտեմ, որ պետք է աշխատանքային պայմանագիր լինի, բայց երբ առաջարկել եմ, ասել են՝ դա կարեւոր չի, ձեր աշխատած փողը ձեզ կտանք: Ավելի քան 90 հոգուց որեւէ մեկի հետ չկա կնքած աշխատանքային պայմանագիր, որեւէ մեկին չեն հրամանագրել, չեն գրանցել, բացարձակ»,- վրդովված ասում է նա:

Նրանք նաեւ նշում են, որ դեռ մեկ ամիս առաջ են որոշել գալ ու ՀՀ Կառավարության շենքի դիմաց բողոքի ակցիա իրականացնել, բարձրացնել իրենց խնդիրը, սակայն գործատուները համոզել են իրենց չգնալ այդ քայլին՝ վստահեցնելով, որ կստանան իրենց աշխատած գումարները: Նրանց խոսքով՝ համոզողներից մեկը եղել է Նարեկ Նալբանդյանը: Նա, մասնավորապես, ասել է՝ «Կառավարություն պետք չէ գնալ, գնացեք ու Արտյոմից ուզեք, փողը իր մոտ է»:

Շինարարներն ասում են, որ 55 մլն դրամը փոխանցվել էր «Վենեցիա» հյուրանոցի տնօրենին, վերջինս էլ գումարը փոխանցել է մյուս ընկերության տնօրենին՝ Արտաշես Գեւորգյանին, նա էլ հրաժարվում է վճարել շինարարների աշխատած գումարը:

Հիշեցնենք, որ Նիկոլ Փաշինյանն ամիսներ առաջ հայտնել է, որ քաղաքացիները մշտապես իրեն նամակներ են ուղարկում, որոնց ինքը պարտադիր կեպով, հատ առ հատ անդրադառնում է: Ուստի՝ մենք հետաքրքրվեցինք, թե շինարարները պատրաստվում են արդյոք դիմել Նիկոլ Փաշինյանին, նամակ գրել նրան՝ բարձրաձայնելու իրենց խնդիրը:

Շինարարները, ի պատասխան մեր այս հարցին, բացասական պատասխան տվեցին՝ ասելով. «Մենք չենք վստահում իրեն, քանի որ այդ օլիգարխն էլ է իրենց մարդը»:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԵՄ ՄՏԵՐԻՄ ԳՈՐԾԸՆԿԵՐ

«Ֆակտոր». Եվրոպական խորհրդի նախագահ Անտոնիո Կոշտան, Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լայենի հետ միասին, կներկայացնեն ԵՄ-ն 2026 թվականի մայիսի 4-ին եւ 5-ին Երեւանում կայանալիք ԵՄ-Հայաստան գագաթնաժողովում: Հայաստանը կներկայացնի վարչապետ Նիկոլ Փաշինյանը: Այս մասին ասվում է Եվրահանձնաժողովի հայտարարության մեջ:

Գագաթնաժողովից առաջ Կոշտան եւ ֆոն դեր Լեյենը կմասնակցեն Եվրոպական քաղաքական համայնքի հանդիպմանը, որը տեղի կունենա 2026 թվականի մայիսի 4-ին Երեւանում: Նշվում է, որ ԵՄ-ՀՀ գագաթնաժողովը կկենտրոնանա երկկողմ հարաբերությունների ամրապնդման վրա, մասնավորապես, էներգետիկայի, տրանսպորտի եւ թվային տեխնոլոգիաների ոլորտում: Առաջնորդները կքննարկեն նաեւ Հարավային Կովկասում խաղաղության, անվտանգության, կապի եւ բարգավաճման ապահովման հետ կապված առաջընթացը, ինչպես նաեւ ներկայիս համաշխարհային մարտահրավերները, այդ թվում՝ Մերձավոր Արեւելքում եւ Ուկրաինայում տեղի ունեցող վերջին զարգացումները:

«Հայաստանը ԵՄ մտերիմ գործընկերն է, եւ մենք անհամբեր սպասում ենք այս հարաբերությունների խորացմանը մեր առաջին գագաթնաժողովի միջոցով: Միավորված լինելով ընդհանուր արժեքներով, միջազգային իրավունքի եւ կանոնների վրա հիմնված միջազգային կարգի նկատմամբ նվիրվածությամբ՝ այս կարեւոր իրադարձությունը կնշանակի կարեւոր ներդրում Հարավային Կովկասում խաղաղության, անվտանգության, կապի եւ բարգավաճման գործում»,- նշել է Կոշտան:

ՄԱԿ-Ը ՊԵՏՔ Է ԴԱՏԱՊԱՐՏԻ

Միավորված Ազգերի Կազմակերպությունը պետք է պնդի ՄԱԿ-ի կանոնադրությունը խախտող եւ միջազգային իրավունքի, այդ թվում՝ մարդասիրական իրավունքի եւ մարդու իրավունքների հիմքերը խաթարող ագրեսոր պետությունների նկատմամբ քրեական հետապնդման անհրաժեշտությունը:

Այս կարծիքը հայտնել է Իրանի արտաքին գործերի նախարար Աբբաս Արաղչին ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Անտոնիո Գուտերեշի հետ հեռախոսազրույցում:

Հաշվի առնելով ԱՄՆ-ի եւ Իսրայելի կողմից քաղաքացիական թիրախների, այդ թվում՝ դպրոցների, հիվանդանոցների, մշակութային եւ պատմական շենքերի եւ բնակելի թաղամասերի վրա հարձակումները, Արաղչին ընդգծել է, որ ՄԱԿ-ը եւ նրա գլխավոր քարտուղարը պետք է պնդեն «մեղադրանքի ենթարկել ագրեսորների կողմից ՄԱԿ-ի կանոնադրության եւ միջազգային իրավունքի, այդ թվում՝ մարդու իրավունքների եւ մարդասիրական իրավունքի կոպիտ խախտումները», ասվում է Իրանի արտաքին գործերի նախարարության հայտարարության մեջ:

ԹՐԱՄՓԸ ՀԵՏԱՁԳՈՒՄ Է

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը եւս10 օրով հետաձգում է հարվածները Իրանի էներգետիկ ենթակառուցվածքներին: Այս մասին իր Truth Social էջում գրել է Թրամփը: «Իրանի կառավարության խնդրանքով հետաձգում եմ էլեկտրակայանների ոչնչացման փուլը 10 օրով՝ մինչեւ 2026 թվականի ապրիլի 6-ը», -գրել է ԱՄՆ նախագահը: Բանակցություններն, ըստ Թրամփի շարունակվում են, եւ չնայած հակառակը պնդող հայտարարությունների, «դրանք շատ լավ են ընթանում»:

Ավելի վաղ ԱՄՆ նախագահը հայտարարել էր, որ Վաշինգտոնի ու Թեհրանի միջեւ «արդյունավետ» բանակցությունների մասին եւ հանձնարարել է հինգ օրով հետաձգել Իրանի էլեկտրակայաններին եւ էներգետիկ ենթակառուցվածքներին հարվածները:

Օրերս Wall Street Journal-ն ու AP-ն գրել էին, որ ԱՄՆ-ն Պակիստանի միջոցով 15 կետանոց առաջարկներ է փոխանցել Իրանին: Արտգործնախարար Աբբաս Արաղչին հայտարարել է, որ Իրանը ուսումնասիրում է ԱՄՆ-ի առաջարկը՝ պատերազմը դադարեցնելու վերաբերյալ:

ՄԻՊ ԶԵԿՈՒՅՑ

ՔԿՀ-ՆԵՐՈՒՄ ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՑՈՒՑԱՆԻՇԸ ԱՄԵՆԱԲԱՐՁՐՆ Է

Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդմանը զուգահեռ հրապարակվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի 2025 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան զեկույցը: Այն ընդգրկում է Կանխարգելման ազգային մեխանիզմի մշտադիտարկման արդյունքում վերահանված խնդիրները, ինչպես նաեւ դրանց լուծման առաջարկները:

Զեկույցն ամփոփում է՝ քրեակատարողական հիմնարկներում, հոգեբուժական կազմակերպություններում, Ոստիկանության ձերբակալվածներին պահելու վայրերում եւ դատարաններում ազատությունից զրկված անձանց ժամանակավոր պահման խցերում արձանագրված խնդիրները: 2025 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանը կանխարգելման ազգային մեխանիզմի գործառույթի շրջանակներում իրականացրել է 59 մշտադիտարկման այց (20-ը պարբերական, իսկ 39-ը՝ ըստ անհրաժեշտության)՝ նպաստելով առկա խնդիրների բացահայտմանը եւ դրանց լուծմանն ուղղված առաջարկությունների ներկայացմանը:

Զեկույցի համաձայն՝ 2025 թվականին ներկայացված 487 առաջարկներից կատարված է գնահատվել 113-ը (23,2%), որից 49 առաջարկների մասով պետք է ապահովել դրանց շարունակական կատարումը: Մասնակի կատարված է գնահատվել ներկայացված առաջարկներից 225-ի (46,2%) կատարողականը, իսկ 149 առաջարկները (30,6%) դեռեւս չեն կատարվել:

Զեկույցը փաստում է, որ չնայած իրականացված աշխատանքներին, բազմաթիվ խնդիրներ դեռեւս չեն ստացել բավարար լուծումներ: Մասնավորապես, ուշադրության կենտրոնում են դատարաններում ազատությունից զրկված անձանց ժամանակավոր պահման խցերում պահման պայմանները՝ խցերի կահավորման, լուսավորության, սանիտարահիգիենիկ վիճակի, տեղաշարժման հետ կապված խնդիրներ ունեցող անձանց համար չհարմարեցված միջավայրի, ինչպես նաեւ ազատությունից զրկված անձանց սննդի, բժշկական օգնության եւ իրավաբանական օգնության ապահովման հարցերը: Առանձնահատուկ մտահոգություն են առաջացնում քրեակատարողական հիմնարկներում մահվան դեպքերի աճն ու ինքնասպանությունների բարձր ցուցանիշը: ՀՀ արդարադատության նախարարության տվյալներով՝ 2025 թվականին արձանագրվել է մահվան 24 դեպք, որոնցից 8-ը՝ ինքնասպանություն: Քրեակատարողական հիմնարկներում մահացության ցուցանիշը նախորդ տարվա համեմատ կրկնապատկվել է (2024 թվականի ընթացքում գրանցվել է մահվան 12 դեպք, որոնք բոլորն էլ եղել են կենսաբանական մահեր), իսկ ինքնասպանության դեպքերի ցուցանիշը ամենաբարձրն է վերջին 15 տարիների ընթացքում: Մարդու իրավունքների պաշտպանը շեշտում է, որ պետությունն ունի պոզիտիվ պարտականություն՝ ապահովելու իր իրավասության ներքո գտնվող անձանց կյանքի իրավունքի երաշխավորումը, ինչպես նաեւ ապահովելու մահվան յուրաքանչյուր դեպքի կապակցությամբ իրականացվող քննությունների լիարժեք, բազմակողմանի եւ արդյունավետ իրականացումը: Զեկույցում անդրադարձ է կատարվում նաեւ խոշտանգումների եւ վատ վերաբերմունքի դեպքերին պատշաճ արձագանքելու, դրանց արդյունավետ քննության ապահովման անհրաժեշտությանը, ինչպես նաեւ հոգեբուժական կազմակերպություններում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ոչ հոժարակամ հոսպիտալացման ընթացքում օրենսդրության պահանջների պահպանման կարեւորությանը: Պաշտպանը կարեւորում է նաեւ խոշտանգումից տուժած անձանց համար աջակցության կենտրոնի ստեղծումը, որը կներառի բժշկական, հոգեբանական, իրավաբանական եւ սոցիալական ծառայություններ՝ տուժածներին վերականգնման եւ հասարակություն վերաինտեգրման ուղղությամբ աջակցություն ցուցաբերելու նպատակով: Մարդու իրավունքների պաշտպանը նաեւ կարեւորել է իրավասու մարմինների հետ համագործակցությունը, որը թույլ է տվել մի շարք հարցերի վերաբերյալ լուծումներ գտնել՝ նպատակ ունենալով իրականացնելու բարեփոխումներ եւ շտկելու մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում առկա խնդիրները: Զեկույցին կարող եք ծանոթանալ Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական կայքէջում:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպան

ԿԵՂԾ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչությունում քննվող քրեական վարույթի նախաքննության ընթացքում առերեւույթ փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ Մ.Պ.-ն զորակոչից խաբեության եղանակով խուսափելու փորձ կատարելու նպատակով՝ 2024 թվականի ապրիլի 29-ին Կոտայքի մարզի զինկոմիսարիատ է ներկայացրել «Բժշկական գենետիկայի եւ առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՍՊԸ-ի կողմից տրված՝ իր՝ իբր պարբերական հիվանդությամբ տառապելու վերաբերյալ կեղծ փաստաթուղթ, ինչը հերքվել է ինչպես բժշկական կլինիկայում եւ ախտորոշիչ լաբորատորիայում կատարված հետազոտություններով, այնպես էլ վարույթի շրջանակում նշանակված դատագենետիկական փորձաքննությունների եզրակացություններով:

Արդյունքում, Մ.Պ.-ն ճանաչվել է պիտանի զինվորական ծառայության համար եւ զորակոչվել ՀՀ զինված ուժեր:

Բացի այդ, զորակոչիկի մայրը, բժշկական կենտրոնի բժիշկը եւ քաղաքացի Հ.Մ.-ն խոչընդոտներ վերացնելով եւ տեղեկություններ տրամադրելով օժանդակել են Մ.Պ.-ին՝ զորակոչից խաբեության ճանապարհով խուսափելու փորձ կատարելուն, սակայն իրենց կամքից անկախ հանգամանքներում վերջիններիս դիտավորության մեջ ընդգրկված հանցանքն ավարտին չի հասցվել:

Ա.Ի.-ի, Ա.Ն.-ի եւ Հ.Մ.-ի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 46-44-461-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով (պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից կամ զորահավաքային զորակոչից խուսափելու փորձին օժանդակելը):

Քրեական վարույթը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է հսկող դատախազին: Ծանուցում. հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ Քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

ԼՈՒՐԵՐ

ԱՐԴԱՐԱՑՎԵՑ

Փաստաբան Աբգար Պողոսյանը ֆեյսբուքյան գրառում է կատարել. «Հանիրավի հանրային պարսավանք, լուսանկարների տարածում, անմեղության կանխավարկածի խախտում, իրականության հետ կապ չունեցող տեղեկությունների շրջանառություն:

Այսպիսով՝ Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի Քրեական Դատարանը (նախագահող՝ ԱՆԻ ԴԱՆԻԵԼՅԱՆ) ՀՀ ԱԳՆ աշխատակից Աշխեն Ալեքսանյանի վարույթով հրապարակեց վերդիկտ, ըստ որի Ալեքսանյանն իրեն մեղսագրվող ՀՀ Քր. Օր.-ի 418-րդ հոդվածով, (ազատազրկում՝ 15-20 տարի կամ ցմահ) այլ կերպ ասած՝ պետական դավաճանության մեղադրանքով Ալեքսանյանն ԱՐԴԱՐԱՑՎԵՑ:

Ըստ Դատարանի՝ վերջինիս գործողություններում առկա էր ՀՀ Քր Օր.-ի 441-րդ հոդվածի առաջին մասով նախատեսված արարք (առավելագույնը՝ 4 տարի ազատազրկում):

Թեպետ պաշտպանական կողմը եւս կբողոքարկի դատավճիռը վերաքննիչ քրեական դատարանում, այնուամենայնիվ ցանկանում ենք հատուկ շնորհակալություն հայտնել Դատարանին՝ անկողմնակալ, օբյեկտիվ եւ անաչառ քննության համար:

ԴԱՆԱԿԱՀԱՐՎԵԼ ԵՆ

Երեկ Վարդենիսի զորամասերից մեկում միջադեպ է տեղի ունեցել, որն ավարտվել է դանակահարությամբ: Ըստ լուրերի՝ դանակահարված զինծառայողները 3 հոգի են, երեքն էլ այս պահին հոսպիտալում են:

Պաշտպանության նախարարությունից հայտնեցին, որ վնասվածք ստացած պահեստազորայինների կյանքին վտանգ չի սպառնում, գտնվում են հոսպիտալի բուժանձնակազմի հսկողության տակ:

«Նախաձեռնվել է վարույթ՝ դեպքի հանգամանքներն ամբողջովին պարզելու նպատակով»,- ասացին գերատեսչությունից:

ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼ ԵՆ

Մարտի 6-ին՝ ժամը 22:24-ին, ՆԳՆ 112 օպերատիվ կառավարման կենտրոն հիվանդանոցից հաղորդում էր ստացվել, որ շտապօգնության խումբը բուժօգնության է տեղափոխել կտրածծկած, արնահոսող վնասվածքով 32-ամյա երիտասարդի: Կազմված փաստաթղթերն ուղարկվել էին նախաքննական մարմին: Նախաձեռնվել էր քրեական վարույթ: Քրեական ոստիկանության Երեւանի քաղաքի վարչության ծառայողների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ մարտի 6-ին՝ ժամը 21:30-ի սահմաններում, Անդրանիկի փողոցում գտնվող ռեստորաններից մեկի մոտ 32-ամյա երիտասարդը, վիճաբանել է 21-ամյա մի երիտասարդի հետ: Վիճաբանության ընթացքում վերջինս կտրող-ծակող գործիքով ծանր մարմնական վնասվածքներ է պատճառել 32-ամյա երիտասարդին եւ նրա 60-ամյա ընկերոջը:

Ձեռնարկված միջոցառումների արդյունքում Երեւանի բնակիչ 21-ամյա երիտասարդը հայտնաբերվել, ձերբակալվել եւ ներկայացվել է վարույթն իրականացնող մարմին: Նա տեղափոխվել է քրեակատարողական հիմնարկ:

Նախաքննությունը շարունակվում է:

● *Մարտի 25-ից 26-ը բացահայտվել է ֆիզիկական ներգործության, հոգեկան ներգործության, սառը զենքի հայտնաբերման 6-ական դեպք:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԹԻՎԸ ՆՎԱԶԵԼ Է

Հայաստանի անկախանալուց հետո Տավուշի մարզի սահմանամերձ գյուղերից, փոքր բնակավայրերից մեծ արտագաղթ է եղել: Սահմանագոտում ապրողները հայրենի շեները լքել, հեռացել են պատերազմական իրավիճակի, զբաղվածություն չունենալու, Հայաստանում տիրող անօրինականության, օտար երկրում ավելի լավ կյանք որոնելու պատճառներով: Բերդ համայնքի սահմանամերձ Մովսես գյուղից տասնյակ ընտանիքներ բնակություն են հաստատել Մոսկվայում, ուր զբաղվում են գործարարությամբ: Նոյեմբերյան համայնքի սահմանամերձ Ոսկեպար գյուղից տասնյակ ընտանիքներ արտագաղթել են Ռուսաստանի Բելգորոդի մարզի Ստարի Օսկոլ քաղաք, որը ոսկեպարցիները կատակով Նոր Ոսկեպար են կոչում: Նոյեմբերյան համայնքի սահմանամերձ, հեռավոր Բարեկամավան գյուղում այժմ ապրողներից թվով առավել բարեկամավանցիներ ներկայումս բնակվում են Ռուսաստանի Ստավրոպոլ քաղաքում եւ Ստավրոպոլի երկրամասում: Տավուշի մարզից նաեւ ներքին արտագաղթ է եղել ու այն շարունակվում է: Սահմանամերձ եւ փոքր գյուղերի բնակիչները վերաբնակվում են Երեւանում, Հայաստանի այլ քաղաքներում: Տավուշի մարզի սահմանամերձ եւ փոքր գյուղերում արտագաղթի տխուր հետեւանքներն ակնառու են երեկոները, երբ թաղամասերի տներում քիչ լույսեր են վառվում, առանձնատներում ապրողներն էլ հիմնականում տարեց ամուսիններ են: Արտագաղթի եւ ծնունդների թվի նվազման հետեւանքով անցած 35 տարում նվազել է դպրոցների աշակերտների թիվը: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցում եմ արել մարզի հանրակրթական դպրոցների աշխատողների եւ աշակերտների թվի վերաբերյալ: Մարզպետի աշխատակազմից պատասխանել են. «Տավուշի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող հանրակրթական դպրոցներում աշխատողների հաշվառում չի իրականացվում,սովորող աշակերտների թիվը 158 է»: Ինչո՞ւ պետական հանրակրթական դպրոցներում աշխատողների հաշվառում չի իրականացվում, դա անտրամաբանական է: Տավուշի սահմանագոտում պետական աջակցությամբ, վարկային միջոցներով, 16 եւ 21 միլիոն դրամով արժեքով առանձնատներ են կառուցվել, դրանց շինարարությունն ընթացքի մեջ է: Սակայն այդ տների մի մասը կառուցվել ե ն ոչ այդ գյուղերի բնակիչների, այլ՝ քաղաքներում բնակվողների կողմից՝ որպես իրենց համար ամառանոց: Այդ տների կառուցումը ինքնիստինքյան չի բերելու գյուղերի բնակչության աճի, դպրոցահասակ երեխաների թվի ավելացման: Տավուշում, բացառությամբ Դեբեդի հովտի բնակավայրերի, գյուղատնտեսությունը եկամտաբերություն չի ապահովում, ուստիապրուստի համար գյուղերից գաղթը շարունակվում է:Տավուշի մարզի բնակչության քանակը չի աճում, աշակերտների թիվն էլ նվազել է; Տավուշի մարզպետարանի տվյալներով՝ 2002-2003 ուսումնական տարում Տավուշի մարզի հանրակրթական դպրոցներում սովորել է 21 հազար 896 աշակերտ, որոնց դասավանդել է 2 հազար 532 ուսուցիչ: Անցած 23 տարում մարզի հանրակրթական դպրոցների աշակերտների քիվը նվազել է 6 հազար 428-ով, այժմ դարձել 15 հազար 468:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

ՊԵԿ ՏԵՍՈՒՉԻ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ

ArmLur.am-ը ուսումնասիրել է Պետական եկամուտների կոմիտեի ներքին անվտանգության վարչության անվտանգության եւ պահպանության բաժնի գլխավոր մասնագետ տեսուչ Արման Արամյանի 2024 թվականի տարեկան հայտարարագիրը:

Նշենք, որ Արման Արամյանը զբաղեցնում է իր պաշտոնը 2022 թվականի մարտի 24-ից:

Ինչ գույք ունի պաշտոնյան

ArmLur.am-ի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ Արամյանը հայտարարագրել է մեկ անշարժ գույք՝ բնակարան Կոտայքի մարզի Աբովյան քաղաքում: Բնակարանը համատեղ սեփականություն է եւ ձեռք է բերվել դեռեւս 1989 թվականին:

Տրանսպորտային միջոցներից պաշտոնյան ունի 2000 թվականի արտադրության Mercedes-Benz մակնիշի ավտոմեքենա, որը գնել է 2021 թվականի հունվարի 11-ին:

Բացի այդ, նա հայտարարագրել է նաեւ թանկարժեք գույք՝ ոսկյա զարդեր, որոնք ստացել է նվիրատվությամբ 2017 թվականին՝ 2200 ԱՄՆ դոլար արժեքով:

Դրամական միջոցներ եւ եկամուտներ

ArmLur.am-ը պարզեց, որ բանկային հաշիվներում հաշվետու տարվա վերջում Արամյանը միջոցներ չի ունեցել, սակայն առկա է եղել կանխիկ գումար՝ 3000 ԱՄՆ դոլար եւ 3 մլն 500 հազար դրամ:

Ինչ վերաբերում է եկամուտներին, ապա 2024 թվականի ընթացքում նրա ընդհանուր եկամուտը կազմել է 6 մլն 356 հազար 445 դրամ: Այդ թվում՝

- աշխատավարձ՝ 5 մլն 556 հազար 445 դրամ,
- ստացված վարկ՝ 800 հազար դրամ:

Միեւնույն ժամանակ, ArmLur.am-ը պարզեց, որ հաշվետու տարվա վերջում Արամյանի վարկային պարտավորության մնացորդը կազմել է 650 հազար դրամ:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

«ՈՒԺԵՂ ՀԱՅԱՍՏԱՆ»-Ի ԱՆԴԱՄՆԵՐԸ ՀԱՆԴԻՊԵՑԻՆ ՀԱՄԱԿԻՐՆԵՐԻ ՀԵՏ

Մարտի 26-ին «Ուժեղ Հայաստան» կուսակցության անդամները աշխատանքային այցով մեկնեցին Սյունիքի մարզ:

Առաջին կանգառը Սիսիան քաղաքն էր, որտեղ տեղի ունեցավ կուսակցության անդամների հանդիպումը կուսակցության Սիսիան համայնքի համակիրների հետ:

Հանդիպման ընթացքում «Ուժեղ Հայաստան» կուսակցության խորհրդի անդամ Նարեկ Կարապետյանը սիսիանցիներին ներկայացրեց կուսակցության նախագահ Սամվել Կարապետյանի տնտեսական եւ անվտանգային ծրագրերը՝ միաժամանակ ներկայացնելով Սամվել Կարապետյանի՝ քաղաքականություն մտնելու պատճառները.

«Այլընտրանք ունենալով ուղղակի հանգիստ կյանք ապրելու, Սամվել Կարապետյանը որոշել է հանգիստ կյանք չապրել, մտնել դրա տակ ու փորձել փոխել եւ փոխելու է: Այլ՝ ուրիշ ուժ, եթե դուք տեսնում եք, ասեք՝ ով կարող է Հայաստանը հանել աղքատությունից: Ո՞վ այդ փորձը ունի, որ Հայաստանը կհանի աղքատությունից: Որեւէ մեկը չկա, որ տնտեսական անցյալ ունենա՝ այնպես, որ տասնյակ հազարավոր մարդկանց հետ աշխատած լինի, իմանա՝ ոնց է այդ աղքատությունը հաղթահարվում»:

Խոսելով կուսակցության նախագահ Սամվել Կարապետյանի անցած ճանապարհի մասին՝ Նարեկ Կարապետյանը նշել է, որ կուսակցության նախագահը աշխարհի տարբեր երկրներում նույն ճանապարհն անցել է: Այնպես չէ, որ մի երկրում է հաջողության հասել՝ երեք-չորս երկրում Սամվել Կարապետյանն ունի իրա տնտեսական միավորները: Նարեկ Կարապետյանը շեշտել է, որ Սամվել Կարապետյանն իր ներուժը ներդնում է Հայաստանի զարգացման համար եւ չունի եւ չի կարող ունենալ այլ մոտիվացիա, քան Հայաստանի զարգացումը, քանի որ լինելով ֆինանսապես ապահովված՝ նա կլինի Հայաստանի միակ առաջնորդնորդը, որը որեւէ բանի կարիք չի ունենալու իշխանության գալուց հետո:

Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել նաեւ տնտեսության, անվանգային, սոցիալական, կրթական եւ մի շարք այլ հարցերին, ինչպես նաեւ համայնքների համաչափ զարգացման մարտահրավերներին:

Սիսիանից հետո կուսակցության անդամների հաջորդ կանգառը Գորիս քաղաքն էր, որտեղ խոսելով խաղաղության գործընթացի մասին՝ Նարեկ Կարապետյանը նշել է, որ գործող իշխանությունները արդեն զիջել են ամեն ինչ, ինչ հնարավոր էր՝ շեշտելով, որ կա թույլ եւ ուժեղ խաղաղություն. «Նիկոլ Փաշինյանը արդեն բավարարել է Ադրբեջանի նախագահի բոլոր պահանջները: Այսօր նա հայտարարել է, որ հայկական պահանջատիրությունը չի պաշտպանելու: Դա գիտե՞ք՝ ինչ է նշանակում: Ցեղասպանության ճանաչումը պետականորեն չի պահանջելու:

Թույլ խաղաղությունը դա այն խաղաղությունն է, որ մենք մեր դուռը բացում ենք հակառակորդ ազգի ներկայացուցիչների առաջ՝ դուռը բացում ենք իրենց Հայաստան գալու առաջ: Հարեւան երկրի ղեկավարը բազմաթիվ անգամ ասել է, որ իրենք պետք է գան: Ինչ ուզել է, ստացել է, հիմա մի նոր պահանջ է մտածել, որ այստեղ պետք է գան այն մարդիկ, ովքեր Գորիսում երբեք չեն ապրել, այսպես ասեմ, իմացաք՝ ում մասին է խոսքը... Ու գան՝ սերմ դնեն Հայաստանում: Դա թույլ խաղաղությունն է:

Ուժեղ խաղաղությունը դա այն խաղաղությունն է, որին մենք հասնելու ենք, այսինքն՝ հարեւանների հետ հավասարը հավասարի պես ենք շփվելու:

Պետք է երկիրը ունենա ուժեղ ղեկավար, որ այդ ղեկավարը ունենա կապեր: Երկիր կա, որտեղ որոշումը կայացնում են համակարգում տարբեր մարդիկ, որոնց հետ պետք է երկիրը պայմանավորվի. մեծ երկրների մասին է խոսքը: Հայաստանի վարչապետը չունի այդ միջոցները: Դա գրառում գրելով չի: Հայաստանից դուրս նա անդեմ է, ուժ չունի, չի կարող մեր երկրին ուժեղ խաղաղություն ապահովել», - նշել է Նարեկ Կարապետյանը:

Հանդիպման ընթացքում կուսակցության անդամները գորիսեցիներին ներկայացրել են կուսակցության տնտեսական եւ անվտանգային ծրագրերը, պատասխանել հանդիպման մասնակիցներին հետաքրքրող հարցերին, տեղի է ունեցել նաեւ մտքերի եւ կարծիքների փոխանակում Հայաստանի առջեւ ծառացած այլ մարտահրավերների մասին:

Կուսակցության անդամների աշխատանքային այցը Սյունիք շարունակվում է:

● *Մարտի 25-ից 26-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է խուլիգանության 3 դեպք:*

ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ

ԿՏԵՂԱԲԱՇԽԻ ԴՐԱՄԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՄԵՐ

Ս.թ. ապրիլի 1-ից մինչեւ սեպտեմբերի 1-ը ընկած ժամանակահատվածում Հայէկոնոմբանկը կտեղաբաշխի իր կողմից թողարկված դրամային պարտատոմսերի հերթական տրանշը:

3 մլրդ դրամ ընդհանուր ծավալով դրամային պարտատոմսերը ներառում են 300,000 հատ անվանական, ոչ փաստաթղթային, արժեկտրոնային պարտատոմս՝ 10,000 դրամ անվանական արժեքով:

Պարտատոմսերի արժեկտրոնային տարեկան եկամտաբերությունը 9.75% է, արժեկտրոնների վճարման պարբերականությունը՝ կիսամյակային, շրջանառության ժամկետը՝ 36 ամիս, իսկ պարտատոմսերի մարման ամսաթիվը՝ 01.04.2029թ.:

Տեղաբաշխման ավարտից հետո պարտատոմսերը ներկայացվելու են ցուցակման Հայաստանի ֆոնդային բորսայում եւ գնանշվելու են շուկա ստեղծողի (Marketmaker) կողմից:

Պարտատոմսերի ծրագրային ազդագրի (գրանցված ՀՀ ԿԲ-ի կողմից) եւ թողարկման վերջնական պայմանների էլեկտրոնային տարբերակները կարելի է ներբեռնել Բանկի կայքէջից, իսկ թղթային տարբերակը հնարավոր է ձեռք բերել՝այցելելով Բանկի Գլխամասային գրասենյակ (հասցե՝ ք. Երեւան, Ամիրյան 23/1):

Պարտատոմսերը կարող են ձեռք բերել ֆիզիկական եւ իրավաբանական անձինք AEB MOBILE հավելվածի կամ AEB ONLINE համակարգի միջոցով, ինչպես նաեւ կարող են մոտենալ Հայէկոնոմբանկի Գլխամասային գրասենյակ կամ ցանկացած մասնաճյուղ՝ ներկայացնելով սահմանված կարգով լրացված Պարտատոմսերի ձեռքբերման հայտ/հայտեր:

AEB Mobile հավելվածը կարելի է ներբեռնել այստեղ:

Հիշեցնենք, որ՝

«Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ում ցուցակված պարտատոմսերի դիմաց մինչեւ 2027թ. դեկտեմբերի 31-ը վճարվող արժեկտրոնային եկամուտները ենթակա չեն հարկման:

«Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ Բանկի կողմից թողարկված անվանական արժեկտրոնային պարտատոմսերով ներգրավված դրամական միջոցները համարվում են երաշխավորված բանկային ավանդ եւ երաշխավորվում են «Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի» կողմից: *(Գ)*

86 86 | aeb.am

Հայէկոնոմբանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից

300 ՄԼՆ ԱՄՆ ԴՈԼԱՐ

Գ

ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՄԻԱՎՈՐՎԵԼ Է ՎԵՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑ

Մարտի 26-ին տեղի է ունեցել ՀՀ բանկային համակարգի պատմության մեջ առաջին սինդիկացված վարկային պայմանագրի ստորագրման հանդիսավոր արարողությունը վեց ֆինանսական կառույցների միջեւ: Սինդիկատի մասնակիցներն են՝ Արդշինբանկ, Ակբա բանկ, Էվոկաբանկ, Ֆասթ բանկ, Ցե-Կվադրատ Ամուեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա ֆոնդ, Ամունդի-Ակբա Ասեթ Մենեջմենթ ֆոնդ:

Ծրագրի առաջին փուլի ներդրումների ընդհանուր ծավալը կազմում է 450 մլն ԱՄՆ դոլար, որի հիմնական մասը ձեւավորվել է տվյալ սինդիկացված ֆինանսավորման միջոցով: Արդշինբանկի նախաձեռնությամբ եւ առաջնորդությամբ իրականացված գործարքը ՀՀ պատմության մեջ առաջին անգամ 6 ֆինանսական կառույց միավորել է մեկ գաղափարի եւ մեգանախագծի շուրջ՝300 մլն ԱՄՆ դոլարի ֆինանսավորում տրամադրելով Ֆայրբըրդ ԷյԱյ ընկերությանը:

Միջոցառմանը ներկա էին ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի, ՀՀ կենտրոնական բանկի նախագահի, ինչպես նաեւ ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան գործերի ժամանակավոր հավատարմատարի գլխավորած պատվիրակությունները:

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Մխիթար Հայրապետյանը նշեց. «Սա ներդրում է ոչ միայն «Firebird AI» ընկերության, այլեւ Հայաստանի տեխնոլոգիական ոլորտի, նորարարության, գիտության եւ տնտեսության զարգացման մեջ: Այս մեգանախագիծը բխում է 2025 թվականին Վաշինգտոնում ստորագրված ռազմավարական փաստաթղթերից, մասնավորապես, արհեստական բանականության եւ կիսահաղորդչային ոլորտներում երկկողմ փոխըմբռնման հուշագրից, որը կապահով կոնկրետ կիրառական արդյունքներ մեր պետության համար՝ շնորհիվ ՀՀ եւ ԱՄՆ կառավարությունների գործուն աջակցության, ընկերության հիմնադիրների գործադրած ջանքերի, ինչպես նաեւ հայաստանյան ֆինանսաբանկային համայնքի ներդրումների»:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյանը նշեց. «Firebird նախագծի հաջող ֆինանսավորումը վկայում է, որ Հայաստանի բանկային եւ ֆինանսական համակարգը վերջին տարիներին հասել է որակական նոր մակարդակի: Այն արդեն ունի բավարար ներուժ՝ գնահատելու, կառուցելու եւ ուղեկցելու նման մասշտաբի եւ միջազգային նշանակության ներդրումային ծրագրեր: Նախագծի երկրորդ փուլը, որի մասին հայտարարվել էր ԱՄՆ փոխնախագահ Վենսի՝ փետրվարին Երեւան կատարած այցի ընթացքում, նախատեսում է լրացուցիչ՝ շուրջ 41,000 NVIDIA պրոցեսորների ներգրավում՝ ընդհանուր ներդրումների ծավալը հասցնելով մոտ 4 միլիարդ ԱՄՆ դոլարի: Սա նշանակում է, որ Հայաստանը կդասվի աշխարհի այն երկրների շարքում, որոնք ունեն արհեստական բանականության խոշորագույն եւ առավել հզոր հաշվողական ենթակառուցվածքներ»:

Հայաստանում ԱՄՆ գործերի ժամանակավոր հավատարմատար Դեյվիդ Ալենն ընդգծեց. «Firebird-ի արհեստական բանականության տվյալների կենտրոնի օրինակը ցույց է տալիս, թե ինչի կարող ենք հասնել մեր երկու երկրների համագործակցությամբ, երբ համադրում ենք մեր կարողությունները տեխնոլոգիական նորարարության ոլորտում: Այս համագործակցությունը նաեւ ներկայացնում է մեր երկու երկրների ուժեղ կողմերը՝ օգտագործելով ԱՄՆ-ի առաջատար տեխնոլոգիական արտահանման արժեքը՝ ներառյալ NVIDIA-ի գրաֆիկական պրոցեսորները (GPU-ներ) եւ Dell-ի տեխնոլոգիաները, միաժամանակ հենվելով Հայաստանի զարգացած բարձր տեխնոլոգիական ոլորտի ներուժի եւ հավակնությունների վրա»:

Սույն գործարքը սահմանում է այսպիսի լայն սինդիկացված վարկավորման կիրառման գործնական նոր ձեւաչափ Հայաստանի ֆինանսական շուկայում: Գործարքը ամենախոշորն է՝ որպես ֆինանսավորում, իսկ նախագիծը՝ որպես ԱՄՆ ներդրում Հայաստանի Հանրապետության տնտեսության մեջ:

Firebird-ի արհեստական բանականության գործարանը դառնալու է տարածաշրջանի ամենահզոր հաշվողական եւ ԱԲ տվյալների մշակման կենտրոնը: Այն հետազոտական հաստատություններին, տեխնոլոգիական ընկերություններին եւ ձեռնարկություններին հնարավորություն կընձեռի մասշտաբային կերպով ներդնել նորագույն ԱԲ տեխնոլոգիաներ՝ Հայաստանը դիրքավորելով որպես գլոբալ տեխնոլոգիական լանդշաֆտի զարգացող ուժ եւ հաջորդ սերնդի նորարարությունների կարեւոր հանգույց:

Բանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից

ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Գ

2020 թվական... Քովիդ, անորոշություններ եւ մարտահրավերներ: Սակայն նաեւ նոր հնարավորություններ: Հենց այդ ժամանակ էլ ծնվեց միջազգային չափորոշիչներին համապատասխան կրթություն առաջարկող կրթօջախ ստեղծելու գաղափարը:



«Դրիմ Բրիջմեն Ինթերնեյշնլ Սքուլ»-ը հիմնադրվեց՝ նպատակ ունենալով ստեղծել կրթական միջավայր, որտեղ երեխաները կստանան ոչ միայն մրցունակ գիտելիք, այլեւ վստահություն իրենց ապագայի հանդեպ:

Դպրոցի հիմնադրումից հետո՝ ընդամենը մի քանի տարվա ընթացքում, նախակրթարանից սկսված գործունեությունն ընդլայնվեց՝ ներառելով կրտսեր եւ միջին դպրոցները: Այսօր արդեն նախատեսվում է նաեւ ավագ դպրոցի նոր մասնաշենքի գործարկումը, ինչը կամբողջացնի կրթական շղթան՝ տասնյակ աշակերտների հնարավորություն տալով կրթվել ժամանակակից միջավայրում եւ նոր մեթոդներով:

«Դրիմ Բրիջմեն Ինթերնեյշնլ Սքուլ»-ը կրթական գործընթացը կազմակերպում է ՀՀ հանրակրթական ծրագրի եւ Օքսֆորդի միջազգային լրացուցիչ կրթական ծրագրի շրջանակի հիման վրա: Դպրոցի զարգացման հիմքում ոչ միայն կրթության որակն է, այլեւ ձեւավորված վստահությունը թե՛ ծնողների, թե՛ աշակերտների կողմից: Այդ վստահությունն է խթանել կառույցի ընդլայնումն ու նոր նպատակների ձեւակերպումը:

Միեւնույն ժամանակ, նման մասշտաբային զարգացման համար կարեւոր է նաեւ վստահելի ֆինանսական գործընկերությունը: Վերջին տարիներին «Դրիմ Բրիջմեն Ինթերնեյշնլ Սքուլ»-ի գործընկերն է Կոնվերս Բանկը, որի աջակցությամբ կառուցվել է միջին դպրոցի մասնաշենքը, իսկ ներկայումս ընթանում է շուրջ 2000 քառակուսի մետր տարածքով ավագ դպրոցի շինարարությունը:

Ծրագիրը ֆինանսավորվել է Կոնվերս Բանկի Women In Business վարկատեսակի շրջանակում: Վերջինս նախատեսված է կին գործարարների համար եւ առանձնանում է որոշումների կայացման արագությամբ ու ճկունությամբ՝հնարավորություն տալով բիզնեսներին իրականացնել զարգացման ծրագրեր եւ ապահովել կայուն աճ:

conversebank.am, 010 511 211

Կոնվերս Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ԶՐՈՒՅՑ

ՎՍՏԱՀ ԵՄ՝ ԳԱՐՈՒՆԸ ԿԻՆ ԿԼԻՆԵՐ

Կանանց տոների եւ Թատրոնի միջազգային օրվա առիթով ArmLur.am-ը զրուցել է Հրաչյա Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնի դերասանուհի Էմմա Մկրտչյանի հետ թատրոնի եւ կանացի ուժի մասին:

-Էմմա՛, արդեն գարուն է, եւ կանաց միամսյակն է, այս առիթով խնդրեմ կասեք՝ ինչ է Ձեզ համար կանացիությունը, եւ որն է Ձեր ներքին ուժի գաղտնիքը:

-Եթե տարվա եղանակները սեռ ունենային, ես վստահ եմ՝ գարունը կին կլիներ: Կանացիությունը ինձ համար ուղիղ համեմատական է գարնան հետ՝ տաք, երբեմն քամոտ, հաճախ անձրեւային, բայց միշտ իր հետ ծաղկունք է բերում:

Իմ ներքին ուժը հենց այս ամենի մեջ ներդաշնակ լինելն է՝ ընդունել ինքս ինձ այնպես, ինչպես կամ՝ իմ բոլոր թերություններով ու առավելություններով:

-Կա՞ն կանացի դետալներ, որոնց ավելի շատ եք ուշադրություն դարձնում հագուստում եւ աքսեսուարներում:

-Վերջին շրջանում հաճախ եմ ընտրում կոստյումներ. ինչ-որ առանձնահատուկ կերպով կանացի են դարձնում ինձ: Թեեւ առօրյայում ավելի շատ սպորտային ոճին եմ մոտ, բայց ունեմ դետալներ, որոնց միշտ հավատարիմ եմ մնում՝ մատանիներ, ականջօղեր եւ, իհարկե, կարմիր շրթներկ, որն ինձ համար տրամադրություն է:

-Էմմա՛, Թատրոնի միջազգային օրն է: Կասե՞ք՝ ի՞նչ է Ձեզ համար լինել դրամատիկական թատրոնի դերասանուհի, ո՞րն է Ձեր ամենասիրած դերը թատրոնում, եւ ի՞նչ առանձնահատկություն ունի թատրոնը Ձեր կյանքում:

-Իմ սիրելի դերերը գնալով շատանում են, բայց առանձնացնեմ Մենդիին՝ «Գանգսթեր Մաքը» ներկայացումից, Ընկեր Մարգարիտային՝ «Չուչել»-ից: Շուտով սպասվում է նաեւ նոր պրեմիերա՝կանանց տոներին նվիրված «Սիրո վեց կանգառ» ներկայացումը, որտեղ իմ դերը պահանջում է նոր փորձառություն ու նոր զգացողություններ, որոնք արդեն շատ հոգեհարազատ են դարձել ինձ:

-Երբեւէ եղե՞լ է, որ, բախվելով արվեստագետի ճանապարհի դժվարություններին, ցանկանաք հեռանալ թատրոնից կամ ասպարեզից:

-Թատրոնը ընտրություն չէ, որից կարելի է հեշտ հրաժարվել: Բավական է մեկ անգամ «վարակվել» թատրոնով, եւ այլեւս չես պատկերացնի կյանքդ առանց այս աշխարհի: Իհարկե, դժվարություններ լինում են: Լինում են վախեր, կասկածներ, որ ինչ-որ բան չի ստացվի: Բայց վախը երբեք առիթ չէ հուսահատվելու կամ հրաժարվելու համար:

-Որպես երիտասարդ դերասանուհի՝ ինչ կուզեիք փոխել արվեստում, եւ ինչի՞ կարիք ունի մեր հանդիսատեսը հիմա:

-Այսօրվա հանդիսատեսին իսկապես դժվար է զարմացնել: Կարծում եմ՝ նա ամենից շատ կարիք ունի տեսնելու անկեղծություն: Չէ՞ որ երբեմն ամենաբարդ հարցերի պատասխանները թաքնված են ամենապարզ բաների մեջ, եւ հենց թատրոնն է, որ կարողանում է դրանք բացել մեզ համար: Ուրախ եմ, որ այսօր գրեթե բոլոր թատրոններում դահլիճները լեփլեցուն են: Սա չմեռնող արվեստ է: Շնորհավոր տոնդ, նորին մեծություն Թատրոն:

Շնորհակալ եմ, որ կաս իմ կյանքում:

Զրուցեց՝ ԱԼԼԱ ԹՈՎՄԱՍՅԱՆԸ

«ՀԱՅՖԻԼՄ» ԿԻՆՈՍՏՈՒԴԻԱՆ ՎԵՐԱԴԱՐՁՎԵԼ Է

«Համո Բեկնազարյանի անվան «Հայֆիլմ» կինոստուդիա» փակ բաժնետիրական ընկերության պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի կառավարման լիազորությունները վերադարձվել են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությանը:

Որոշումն ընդունվել է Կառավարության այսօրվա նիստում, որով հայկական կինոարդյունաբերության հիմնասյուն հանդիսացող կառույցը վերադարձվում է կինոարվեստի ոլորտի պատասխանատու պետական կառավարման լիազորված մարմնին:

2015 թվականից «Հայֆիլմ» կինոստուդիան փոխանցվել էր Պետական գույքի կառավարման կոմիտեին եւ տարիներ շարունակ փաստացի չէր գործում:

Վերջին տարիներին կինոոլորտում արձանագրվող ակտիվ զարգացումները, ինչպես նաեւ միջազգային համագործակցության ընդլայնման միտումները ստեղծել են ռազմավարական նոր հնարավորություններ, եւ անհրաժեշտություն է առաջացել «Հայֆիլմ»-ի պետական բաժնետոմսերի կառավարման լիազորությունները փոխանցել ԿԳՄՍ նախարարությանը՝ կինոոլորտի պետական քաղաքականությունն առավել նպատակային եւ համակարգված իրականացնելու համար:

Ըստ ընդունված որոշման՝ նախատեսվում է կյանքի կոչել Համո Բեկնազարյանի անվան «Հայֆիլմ» կինոստուդիայի վերագործարկման ծրագիրը. մշակվել է կինոարդյունաբերական համալիրի զարգացման «Հայֆիլմ կինոարտադրական քաղաք» հայեցակարգը, որն ընդգրկում է նաեւ «Հայկական կինոժառանգության պահպանման» 2027-2032 թթ. ծրագիրը: «Հայֆիլմ կինոարտադրական քաղաքը» կներառի ֆիլմարտադրության, հետարտադրության, մասնագիտական կրթության եւ կինոժառանգության պահպանության ծառայություններ՝ ստեղծելով ընդլայնված հնարավորություններ կինոարդյունաբերության եւ միջազգային համագործակցության զարգացման, մրցունակ կինոարտադրանքի եւ մշակույթի տնտեսավարման ապահովման համար:

Ֆիլմարտադրությունը ներկայում դիտարկվում է ոչ միայն որպես մշակութային արժեքների տարածման միջոց, այլեւ տնտեսական զարգացման եւ ազգային բրենդի ձեւավորման կարեւոր գործիք: Այն ունի բազմաշերտ ազդեցություն՝ուղղակի եւ անուղղակի կերպով նպաստելով մի շարք ոլորտների զարգացմանը, այդ թվում՝ տեղեկատվական տեխնոլոգիաների, զբոսաշրջության, կրթության, շինարարության եւ տարածքային զարգացման, լոգիստիկայի, սպասարկման ոլորտի, մարքեթինգի եւ կոնտենտային բիզնեսի:

Վերջին տարիներին պետության վարած քաղաքականության շնորհիվ կինոհամայնքի հետ համագործակցությամբ իրականացվել են բազմաթիվ օրենսդրական եւ համակարգային բարեփոխումներ. 2023-2025 թթ. ընդունվել է 7 իրավական ակտ: Ներկայում շրջանառվում են «Կինեմատոգրաֆիայի մասին» օրենքի փոփոխությունների, «Դրամագլխին հատկացումներ կատարելու կարգի», «Ազգային ֆիլմերի նախագծերի պետական ֆինանսավորման տրամադրման մրցույթների կազմակերպման եւ անցկացման կանոնակարգի» նախագծերը: Կառավարության 2025թ. ապրիլի 10-ի N 412 - Ն որոշմամբ մեկնարկել է կինոյի ոլորտում ներդրումների մասնակի վերադարձը. արդեն ստացվել է 10 հայտ՝1.4 մլրդ դրամ ծավալով, որոնցից 6-ը («Թանկարժեք տղաներ», «Կրկին փորձիր», «Օպա պապա», «Մի գդալ սեր», «Թունելից 13 կմ հեռավորության վրա» լիամետրաժ խաղարկային ֆիլմեր եւ անիմացիոն ֆիլմաշար «Սեւանիկ») հաստատված են, 4-ը՝ դիտարկման փուլում են:

Միաժամանակ, ընդլայնվել է մշակույթի ոլորտի միջազգային հեղինակավոր փառատոների եւ մրցանակաբաշխությունների մասնակցած եւ մրցանակի արժանացած մշակույթի գործիչների եւ կազմակերպությունների թիվը: 2025թ. ծրագրի շահառու է դարձել 11 արվեստագետ եւ 8 կազմակերպություն, որոնք մասնակցել են 22 հեղինակավոր հարթակի եւ արժանացել մրցանակների. նրանց հատկացվել է 122 մլն 980 հազար դրամ խրախուսում: 2024-2025 թթ. պետական աջակցություն ստացած 31 ֆիլմեր մասնակցել են 207 միջազգային կինոփառատոնի եւ արժանացել 105 մրցանակի (միայն 2025 թվականին 15 հայկական ֆիլմ մասնակցել է 58 փառատոնի՝ստացել 15 մրցանակ):

ԿԳՄՍՆ աջակցությամբ իրականացվող Երեւանի «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնն ընդգրկվել է Կինոպրոդյուսերների ասոցիացիաների համաշխարհային ֆեդերացիայի (FIAPF) կողմից որակավորված 49 կինոփառատոների ցանկում:

ԼՈՒՐԵՐ

ԹԱՏՐՈՆԻ ՕՐՆ Է

Մարտի 27-ը ամբողջ աշխարհում նշվում է որպես Թատրոնի համաշխարհային օր: Այն հիմնադրվել է 1961 թվականին՝ Միջազգային թատրոնի ինստիտուտի նախաձեռնությամբ:

Օրվա նպատակը թատերարվեստի կարեւորության ընդգծումն է, մշակութային կապերի ամրապնդումը եւ տարբեր երկրների արվեստագետների միջեւ համագործակցության խթանումը: Ամեն տարի այս օրը նշվում է թատերական ներկայացումներով, միջոցառումներով եւ ուղերձներով, որոնք ուղղված են հասարակությանը՝արժեւորելու թատրոնի դերը մարդու հոգեւոր եւ մշակութային կյանքում:

Թատրոնը շարունակում է մնալ կենդանի արվեստ, որը միավորում է մարդկանց, փոխանցում գաղափարներ եւ արտահայտում ժամանակի կարեւոր հարցերը:

ԱՆՆԱԽԱԴԵՊ ԱՐԴՅՈՒՆՔ

Կարինա Ակոպովան ու Նիկիտա Ռախմանինը Պրահայում կայացած Աշխարհի առաջնությունում աննախադեպ արդյունք են գրանցել:

Նրանք սպորտային զույգերի պայքարում գրավել են 8-րդ տեղը: Ազատ ծրագրում Հայաստանը ներկայացնող գեղասահորդները 123.34 միավոր են վաստակել: Երկու վարժությունների արդյունքում նրանք իրենց ակտիվում ունեն 190.46 միավոր:

Չեմպիոնի կոչումը 228.33 միավորով նվաճել են Գերմանիան ներկայացնող Միներվա Ֆաբիեն Հեյսն ու Նիկիտա Վոլոդինը, որոնք Օլիմպիական խաղերում բրոնզե մեդալակիր էին դարձել: Իսկ Ակոպովան ու Ռախմանինը Միլանի խաղերում 180.66 միավորով 14-րդն էին:

Երեկ կարճ ծրագրով հանդես է եկել նաեւ Սեմյոն Դանիելյանցը, որը 67.12 միավորով 26-րդն է ու չի հաղթահարել որակավորման փուլը:

ԴԱՐՁԵԼ Է ՀԱՂԹՈՂ

Տաշքենդում հանդիսավորությամբ ավարտվել է ուզբեկ գրոսմայստեր Գեորգի Ագզամով-ի հիշատակին նվիրված 19-րդ հուշամրցաշարը, որը համարվում է տարածաշրջանի ամենահեղինակավոր շախմատային մրցաշարերից մեկը:

Գլխավոր մրցաշարում փայլուն ելույթ է ունեցել Հայաստանի շախմատի հավաքականի առաջատարներից Հայկ Մարտիրոսյան-ը՝դառնալով մրցաշարի հաղթող: Մարտիրոսյանը 10 տուրերի ընթացքում վաստակել է 7,5 միավոր՝ ցուցադրելով կայուն եւ վստահ խաղ:

Նույնքան միավոր է հավաքել նաեւ ռուս գրոսմայստեր Արտյոմ Ուսկով-ը, սակայն լրացուցիչ ցուցանիշների հաշվարկով Մարտիրոսյանը գերազանցել է մրցակցին եւ զբաղեցրել առաջին հորիզոնականը:

Այս հաղթանակը եւս մեկ կարեւոր հաջողություն է Հայկ Մարտիրոսյանի կարիերայում՝ ընդգծելով նրա բարձր մարզական մակարդակը եւ հաստատելով Հայաստանի դիրքերը միջազգային շախմատում:

● *Մարտի 28-ին՝ ժամը 19:00-ին, Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը տեղի կունենա «Միյաձակիի երազները» համերգը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Իմ նկարով ֆեյք են բացել ու վարկաբեկում են ինձ: Ի՞նչ անեմ նման դեպքում:

Հայկ Թումանյան, 29 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Անձի վերաբերյալ տեղեկությունները, այդ թվում նաեւ լուսանկարները, հանդիսանում են մասնավոր կյանքի բաղադրիչ, եւ առանց անձի համաձայնության այդ տվյալների հավաքումը, մշակումը եւ օգտագործումը արգելվում է օրենքով, եւ հանդիսանում է անձի մասնավոր կյանքը հարգելու իրավունքի խախտում: Այն դեպքում, երբ այդ տվյալների օգտագործումը վնաս է հասցնում անձի պատվին եւ արժանապատվությանը, ապա առկա է կրկնակի խախտում: Սոցիալական ցանցերում նման երեւույթներն առավել տարածում ունեն, առավել եւս, երբ տվյալները հրապարակվել են Ձեր կողմից կամովին եւ գաղտնիության հատուկ ռեժիմով չեն պաշտպանվում: Այն դեպքում, երբ հայտնաբերել եք, որ Ձեր տվյալներով, ներառյալ Ձեր լուսանկարները, բացվել են ֆեյսբուքյան կամ այլ սոիալական կայքի էջեր, ապա.

1. Յուրաքանչյուր սոցիալական կայք՝Facebook.com, Vkontakt.ru, odnoklassniki.ru եւ այլն, ունեն հատուկ կարգավորումներ, որոնք թույլ են տալիս բողոքներ ուղարկելով՝ արգելափակել կոնկրետ սոցիալական էջի օգտատիրոջ գործողությունները: Անհրաժեշտ է դիմել տվյալ սոցիալական կայքի ադմինսիտրացիային՝ պահանջելով արգելափակել տվյալ օգտատիրոջ գործողությունները՝ որպես ֆեյք/կեղծ օգտատիրոջ:

2. Անհրաժեշտ է համապատասխան դիմում-բողոք ուղարկել ՀՀ արդարադատության նախարա-րության «Անձնական տվյալների պաշտպանության գործակալություն»՝ խնդրելով հարուցել համապատասխան վարույթ: Դիմում-բողոքին պետք է կցել ֆեյք էջից կատարված բոլոր արտատպումները:

3. Անհրաժեշտ է հաղորդում ներկայացնել իրավապահ մարմիններին՝ խնդրելով նախապատրաստել նյութեր եւ պարզել, թե ով է առանց Ձեր համաձայնության օգտագործել Ձեր տվյալները:

Պետք է պահպանել ֆեյք/կեղծ էջերի էլեկտրոնային հղումները, արտատպել ֆեյք էջի բոլոր հատվածները տպիչ սարքի միջոցով, որտեղ կերեւան նաեւ Ձեր լուսանկարները կամ անձնական տվյալները, արտատպել նաեւ տվյալ ֆեյք էջի «ընկերներ» եւ այլ բաժինների հատվածները: Հարկ է նշել, որ անձնական տվյալների հավաքման կամ օգտագործման օրենքով սահմանված կարգը խախտելը, եթե տվյալ արարքը չի պարունակում հանցագործության հատկանիշներ, առաջացնում է վարչական պատասխանատվություն, մասնավորապես, տուգանքի նշանակում:

«Անձնական տվյալների պաշտպանության գործակալություն»

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Մարդու անձնական տեղեկություններն առանց նրա համաձայնության օգտագործելը կամ լրատվության միջոցներով այդպիսի տեղեկություններ տարածելը կամ հավաքելը կամ պահելը, եթե դրանք նախատեսված չեն օրենքով, պատժվում է տուգանքով:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ես գրառում եմ արել սոցցանցում, եւ այն արտատպել են: Դա օրինակա՞ն է:

Մարինե Սիմոնյան, 41 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Սոցիալական ցանցերում արվող գրառումների, դրանց հրապարակման եւ օգտագործման կարգը սահմանվում է տվյալ սոցիալական կարգի օգտագործման կանոններով, ինչպես նաեւ միջազգային եւ ներպետական օրենսդրությամբ: Եթե Ձեր կողմից կատարված գրառումը հանդիսանում է Ձեր ստեղծագործական մտքի արդյունք՝ բանաստեղծության, պատմվածք, երգի բառեր կամ այլ ստեղծագործություն, ապա այն պաշտպանվում է հեղինակային իրավունքով: Ստեղծագործություն հանդիսացող գրառումը հրապարակելու պահից ծագում է դրա նկատմամբ անձի հեղինակային իրավունքը, եւ դրա օգտագործման համար յուրաքանչյուր այլ անձ պարտավոր է ստանալ Ձեր թույլտվությունը եւ համաձայնությունը՝ հղում կատարելով հեղինակին: Եթե Ձեր գրառումը կամ հրապարակումը տարածվել է այլ օգտատերերի կողմից, ապա անհրաժեշտ է դիմել Ձեր գրառումն օգտագործած անձին/անձանց պահանջելով՝

1. հեռացնել գրառումը կամ
2. ավելացնել հեղինակին կամ աղբյուրին հղումը:

Եթե Ձեր ներկայացրած պահանջները չեն կատարվում կամ անձը Ձեզ հայտնի չէ, ապա անհրաժեշտ է.

Դիմել համապատասխան սոցիալական ցանցի ադմինիստրացիա՝ ներկայացնելով, որ Ձեր հրապարակումն օգտագործվել է այլ անձի կողմից առանց Ձեր թույլտվության (unauthorized use), որի հիման վրա Դուք պահանջում եք արգելափակել տվյալ օգտատիրոջը:

Անհրաժեշտ է հիշել, որ եթե Դուք ցանկանում եք, որ Ձեր կողմից կատարված գրառումը տարածվի, սակայն պահպանվի դրա նկատմամբ Ձեր՝ հեղինակի իրավունքը, ապա անհրաժեշտ է գրառման սկզբում կամ վերջում տալ ծանուցում հետեւյալ բովանդակությամբ: Բացի դա, հարկ է նշել, որ գրեթե բոլոր սոցցանցերում հնարավոր է կարգավորել հրապարակման լսարանը, այսինքն՝ հասանելի դարձնել հրապարակումը միայն ընկերների, ընկերների խմբի, կոնկրետ մարդկանց կամ առհասարակ՝ բոլորի համար: Յուրաքանչյուր անձ ինքնուրույն կարող է որոշել, թե իր սոցիալական կայքում բացված այս կամ այն էջում կատարվող գրառումները կամ այլ հրապարակումները ովքեր տեսնեն եւ ինչպիսի հասանելիություն ունենան:

Անձնական տվյալների պաշտպանություն

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝shamshyan.com-ի

Առատ ձյան հետեւանքով Սյունիքի մարզի Տանձավետ-Աղվանի ճանապարհին տիրում է բարձիթողի վիճակ. երեկվա դրությամբ մի քանի ժամ վարորդները չէին կարողանում շարժվել:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	- 1 + 2 + 4 + 8
	Կոտայքի լեռներ	- 1 + 2 + 4 + 7
	Կոտայքի նախալեռներ	+ 4 + 7 +8 + 11
	Գեղարքունիք	- 2 + 1 + 4 + 8
	Լոռի	+ 3 + 6 + 9 + 13
	Տավուշ	+ 4 + 8 +10 + 14
	Արագածոտնի լեռներ	- 1 + 2 + 4 + 7
	Արագածոտնի նախալեռներ	+ 4 + 7 + 7 + 11

	Արարատ	+ 6 + 8 +10 + 12
	Արմավիր	+ 7 + 9 +10 + 13
	Վայոց ձորի լեռներ	- 1 + 2 + 3 + 6
	Վայոց ձորի նախալեռներ	+ 7 + 10 + 10 + 13
	Սյունիքի լեռներ	- 1 + 2 + 2 + 5
	Սյունիքի նախալեռներ	+ 3 + 6 + 7 + 10
	Սյունիքի հովիտներ	+ 6 + 10 +11 + 14
	Երեւան	+ 7 + 9 +10 +12

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **27.03.2026**
Տպաքանակ՝3968
Հասցեն՝Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*